նարուժական աշխատողներն ու ընդհանրապես բոլորը, վարոնց անհրաժեշտ ե լինում դարագից անապահով անառակերը մտնել, պարտավոր են մտնելու ժամանակ գոդնոց հագնել և ռետինե կոշիկներ (ծայրահեղ դեպքում

*): Ախտանիկիչ հեղուկը՝ թի վորտերը սրբելու և թի ձեռքերը լվանութեամբ, զարդարուած և անոսնորուածի կամ անոսնորուածովի ցուցմունքով:

ուետինե կրկնակաշիկներ), իսկ դուքս գալու ժամանակ՝ հանել և թողնել միենույն շինության մեջ. բացի դրանից, ինամըով լվանալ ախտահանիչ հեղուկով ձեռքերն ու վառնամանները Սահմանված կարանտինային ուժիմ ամենայն խոտությամբ և մանրակրիտ կերպով կիրառելու դեղում հիվանդների հետ շփում ունեցող մարդիկ, այնուամենայնիվ, մեծ վտանգ են ներկայացնում դարադի տարածման տեսակետից և դրա համար, նրանք անառնարաժական հսկողության մշտական վերահսկողության տակ պետք եւ գտնվեն:

Բացի անառահով վայրն ընդգրկող կարանտինային միջոցառումներից, նույն անառահով վայրի շուրջը՝ 10—15 կիլոմետրի վրա՝ կարանտինի ներգործության ժամանակվա ընթացքում հաստատվում ե նաև այսպես կոչված նախադաշտական (պաշտպանողական) ողակալին գոտի Այդպիսի նախադաշտական գոտին ծառայում ե իրեն մի պատվար, վորը պետք ե խոչընդուա հանդիսանա անառահով վայրից առանով վայրը դարադը մուտք գործելու դեմ Նախադաշտական գոտու հողամասի վրա անառնարաժական հսկողության մարմինների ցուցումներով, կիրառվում են մամնակի կարանտինային (սահմանափակիչ) միջոցառումներ: Մասնակորագեռ նախադաշտական գոտու հողամասի վրա՝ կարանտինի ներգործության ամբողջ տևողության ընթացքում արգելվում են անասունի և անասնահումայթի ամեն տեսակի մթերումներ, անասուններին շաւկաներ և բազարներ տանելը, ինչպես նաև անառնապահական ցուցահանդեսներ կազմակերպելը: Արգելվում ե առանց անասնաբաւժական հսկողության մարմինների թույլարկության ընդհանրագեց անասուններին նախադաշտական դատուց դաւաս տանելը: Սպանդանոցները, սուցարանները, կաթի գործարանները, պանրագործարանները, ինչպես նաև անասունի կաշվեհումույթ մշտակող դորժարան-

Ները այս ժամանակ պետք եւ գտնվեն անասնաբուժա-ստնի-տարական հսկողության հատուկ խիստ վերաճնկողության տակ:

Կարանտինային միջոցառութերը հենց անապահով վայ-ըում ճիշտ կազմակերպելու դեպքում՝ դաբաղը կարող է վերացվել յերեք չորս շաբաթվա ընթացքում: Հենց դրանով ել դարադի հետագա զարգացումը կարելի յե կասեցնել:

ՊԱՏՎԱՍՏՈՒԹԵՐԸ ԴԱԲԱԴԻ ԴԵՄ

Պատվաստութերը վարակիչ հիվանդությունների գեմ լայնորեն կիրառվում են թե անասնաբուժական և թե բժշկական պրակտիկայում: Դրա համար գործ են ածվառ հատուկ բիոլոգիական պրեպարատներ՝ շիճուկներ և վակ-ցիններ: Դրանք ունեն հատուկ ներգործություն, արսինքն՝ արդ պրեպարատներից յուրաքանչյուրը ներգործում ե միայն այն վարակիչ հիվանդության գեմ, վորի դեմ նա պատրաստված եւ Դարադի վերաբերյալ այնպիսի բիոլոգի-ական պրեպարատներ, վորոնք գործնականում տային ան-թերի արդյունքներ, դիտության կողմից դեռևս չեն դանված:

ԽՍՀՄ-ում վերջին տարիններս՝ դաբաղի գեմ պայքա-րելու համար՝ կիրառվում ե իրեն փորձ հակադարադային շիճուկ, սակայն նրա գործածությունը վոչ միշտ տալիս ե միատեսակ, հասաւատուն հետևանքներ:

Այժմ հետազոտություններն ամբողջ ուշադրությունը դարձրել են դաբաղի գեմ վակցին ստանալու՝ վրա՝ իրեն ամենից եժան և լավ հետեւանքներ տվող բիոպրեպարատ:


ԱՐՃԵՍՑԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄ

Դարադի հանդեպ զգայուն անասունների արհեստական վարակումը կատարվում է անասնաբուժի կողմից միայն անասնաբուժական հսկողության վերադաս մարմինների

թռւյլավությամբ այն դեպքերում, յերբ անհրաժեշտ ե
արագ կերպով և միաժամանակ հիվանդացնել բոլոր անս-
սամներին՝ դրանով համաճարակի ընթացքն արագացնելու
և այդ ձևով կարանախնի ներդործության ժամկետը կար-
ճացնելու համար։ Դա հնարավոր է, ինարկե, միայն այն
ժամանակ, յերբ դաբաղը լավորակ ընթացք ունի և չի ա-
ռաջացնի վոչ անկում և վոչ ել ծանր բարդություններ։
Նույնիսկ այդ պայմաններում արհեստական վարակումը
պետք է համարել իրը մի ծայրահեղ միջոց, վորից սոցիա-
լիստական անտեսության պայմաններում՝ պետք և ոգտվել
խստ զգուշությամբ։

Պետք է միշտ նկատի ունենալ վոր դաբաղի վարակի
միջոցով արհեստական վարակումը նույնքան վտանգավոր
է, վորքան ընական վարակումը։

Դարադով հիվանդացած յուրաքանչյուր անսառւն ար-
ատազրում է, մանավանդ հիվանդության տուաջին որերը,



Նկ. 5. Դարադով անփառ գործնելը

ահազին քանակությամբ վարակ՝ շինության մեջ, արսա-
վայրում և զրա հետեանքով ստեղծվում և դարադով վարա-
կի կուտակման վտանգ։ Այդ կարող է դաբաղով հիվանդա-
նալու վտանգավոր դեպքերի պատճառ դառնալը Այս պատ-
ճառով արհեստական կերպով վարակված անսառւների վե-
րաբերյալ ևս պետք է կիրառվեն այնպիսի միջոցներ, վորպի-
սիք դաբաղով ընական կերպով վարակված յօւրաքանչյուր
անսառւնի նկատմամբ են կիրառում։

Արհեստական վարակումը կարող է կատարվել միայն
այն ժամանակ, յերբ անտեսությունը լիովին ապահովված
է ախտահանիչ միջոցներով, յերբ կարելի յե կազմակեր-
պել ընթացիկ ախտահանումը և զոմաղբն անվասա դարձներ։

Արհեստական վարակումը կատարում է անամնագումը
նույն նախրի դաբաղով հիվանդ անսառւներից վերցված

գարտղի վարակով։ Դրա համար, հիվանդության սկզբում, մի քանի գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուններից հավաքվում ե գարաղի վարակը, այսինքն՝ դեռ չպատռված գարաղի ըշտիկների պարունակած հեղուկը և պատերը։ Ապա այս հավաքված ամբողջ նյութը մանրացվում և տրորվում է հախճաղակյա սանդի մեջ։ Վրան ավելացվում ալկալիներ և թթուներ չպարունակող մաքուր պաղ ջուրու Դարաղի վարակն այս նպատակի համար կարելի յե վերցնել ամենաշնչին քանակությամբ, վորովհետեւ նրա 1:5 միլիոն և նույնիսկ 1:10 միլիոն լուծույթը կարող ե վարակել դարաղ հիվանդության յենթակա անասուններին։ Ահավասիկ, վարակ պարունակող այս հեղուկ «Եմուլսիա»-ն ե, վոր ծառայում ե իրեւ նյութ արհեստական վարակման համար։ Խոշոր յեղջյուրավոր անասունի արհեստական վարակումը կատարվում է հետեւյալ ձևով։ Վերին շրթունքի լորձաթաղանթի վրա հատուկ գործիքով (նշտարիչ) առաջացնում են վոչ խորը կտրվածքներ, բերծվածքներ և նրանց վրա միևնույն գործիքով քսում են վարակիչ նյութը։ Վարակը քսելու համար կարելի յե գործածել փափուկ փոքր վրձին կամ ատամի խոզանակ։ Արհեստական վարակումից հետո, յերրորդ որնանասուններին պետք ե քննել՝ համոզվելու համար, զոր վերցված վարակը բավարար չափով ակտիվ ե յեղել և անասունների հիվանդանալն ապահովված ե։

Իրեւ կանոն, արհեստական կերպով վարակված բոլոր անասունները միաժամանակ հիվանդանում են, և հիվանդությունը 12—20 որվա ընթացքում վերջանում ե։

Խոզերի արհեստական վարակման ժամանակ, գարաղի վարակը քսում են նախապես նշտարած կնճիթի վերին մասի մակերեսի վրա։

Մատղաշներին արհեստական վարակման չպետք ե լինթարկել, վորովհետեւ դարաղը հաճախ մեծ կորուստ ե պատճառում։

Այն բալոր դեպինեռում, յերք ճիմք կա կասկածելու, վոր կարգ ե չարուակ դարաղ առաջանալ, արնեստական վարուկում չի բայլատերփում.

Ոյն տնտեսություններում, վորտեղ միաժամանակ պահպանվում են դարաղի յենթակա մի քանի տեսակ անտառուն (խոշոր յեղջևարավոր անտառներ, խոզեր, վաչխարներ), չպետք ե թույլ տար, վոր անտառնի մի տեսակց վարակվի մյուսը, վորովհետեւ կարող ե տեղի ունենալ դարաղի վարակի ուժեղացում։ Սա իր հերթին կարող ե անտառներին ավելի ժամը կերպով հիվանգացնել և ավելացնել կորուստը։ Դրա համար, անտառներին պետք է առանձնացնել իրարից, այսինքն՝ յուրաքանչյուր տեսակի անտառն պահպանել և արածեցնել առանձին և նրանցից յօւրաքանչյուրին ամրացնել հատուկ խնամող անձակազմ։

Համաճարակի ընթացքն արագացնելու նպատակով, արհեստական վարակում կտաարելու դեպքում՝ բնական վարակումից խուսափելու համար, խոլոր անտառներին միաժամանակ պետք ե վարակել։

ՀԻՆՌԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Դարաղի վարակը, ինչպես արդեն հայտնի յե, շատ լերկար ժամանակ կարող ե պահպանվել այն շինությունների մեջ, վորտեղ գտնվել են դարաղով հիվանդ անտառները։ Նա կարող ե պահպանվել ցամքարի, գոմաղրի, անտառների խնամելու իրերի վրա (մսուրներում, դույլերի, թիերի վրա և այլն), վորոնք վորոշ պալմաններում դարաղի տարածման աղբյուր կարող են ծառայել։ Այս պատճառով, ախտահանումը դարաղի համաճարակի ժամանակ խիստ մեծ գործնական նշանակություն ունի։

Մսուրային պահպանման ժամանակ՝ անտառների դարաղով հիվանդանուր դեպքում այն շենքերում, վոր-

աեղ նըանք գտնվել են, ահազին քանակությամբ դարսպէ վարակ և կուտակվում։ Այդպիսի գեղքերում՝ անհրաժեշտ ե կատարել ամենորլա, ընթացիկ ախտահանում վարակի կուտակումը պակսեցնելու համար։ Յեզ նույնիսկ արոտալին պահպանման ժամանակ, իերք անասունը ցերեկն ուզարկվում ե արոտավայրը, իսկ գիշերը վերադառնում ե անասնաբակը, նույնպես անհրաժեշտ չ շինություններն ախտահանել։ Այնից լավ ե, իհարկե, անասուններին հիվանդության ամրող տևողության ընթացքում թօղնել արոտավայրում։

Բոլոր շինությունների իրերի վերջնական ախտահանումը կատարվում ե գարաղի համաճարակը վերջանալուց հետո։

Ախտահանումն սկսելուց առաջ, շինությունն ամենայն խնամքով պետք ե նախապես մաքրել գոմաղրից և ամեն տեսակի կեղտից, վորպեսպի ախտահանումն իր նպատակին հասնի։ Վերջապես, նույնիսկ շինությունները միայն մաքրելն անգամ (առանց ախտահանման) սանիտարական-առողջապահական մեծ նշանակություն ունի։ Վերջնական ախտահանման նախապատրաստման ժամանակ, անպայման պետք ե խնամքով մաքրել գոմաղրը։ Աղբանեղուկի հռոման համար յեղած խողովակները, աղբանեղուկից և ամեն տեսակի կեղտից պիտի մաքրել Մսուրները, դույլերը, թիերը, խողանակները, քերիչները և անասունների խնամքի ալլ իրերը պետք ե կեղտից մաքրել, նախքան տխտահանելը։ Անասունների շենքի պատերը, դռները և առատադրությունները նույնպես պետք ե մաքրվեն կեղտից և ոտք-գոստայնից։ Սակավարժեք և անպետք փայտե իրերն ամենից լավ կլինի այրել։ Յեթե անասնաբակում կամ խողանացում պատերը քարից կամ աղլուսից են կառուցված, այդ գեղքում՝ մաքրելուց և ախտահանելուց հետո՝ անպայման կրով պետք ե սպիտակացվեն։ Շենքի մաքրումը

պետք ե կատարել հետևողականութեն. Նախ մաքրում են առաստազներն ու պատերը, և ապա հատակները, դռները, սարքավորման իրերը կվանալու համար հանձնարարվում ե գործածել տաք ջուր և սապոն (100 լիտր տաք ջրի համար պետք ե վերցնել 3 կգ կանաչ սապոն) կամ ծայրահեղ դեղում՝ 70 աստիճանից վոչ պակաս տաք ջուր Բուլոր շենքերը և անասունների խնամքի իրերը մաքրելուց հետո միայն պետք ե անցնել խոկական ախտահանմանը: Ախտահանման համար պետք ե վերցնել կծու նատրանի յերկու առկոսավիճն լուծույթ, վորն լուրաքանչյուր անգամ պետք ե պատրաստել ըստ կարիքի (նախապես չպետք ե պատրաստել): Կծու նատրոնի փոխարեն կարելի լե վերցնել ֆորմալինի մեկ տոկոսային լուծույթ: Լուծույթի քանակը պատրաստվում ե հետեւյալ հաշվով՝ մեկ քառակուսի մետր տարածության համար մեկ լիտր լուծույթ: Կծու նատրոնով ախտահանմերու ժամանակ, յուրաքանչյուր 10 լիտր լուծույթի վրա ավելացվում ե նաև 5 կգ կիրո Հավաքված ջրերն ախտահանելուց հետո, պետք ե հեռացվեն հասող հեղուկների համար շինված խողովակների միջացով և հավաքվեն աղբափոսերի մեջ:

Ախտահանման ժամանակ բոլոր անասունները շինությունից պետք ե դուրս հանվեն: Ախտահանումից հետո՝ պետք ե բաց անել գռները, պատրահանները և ոգափոխիչով շինությունը հիմնավորապես ողափոխել: Ախտահանման պետք ե յենթարկվեն նաև անասունները:

Բուրդն ու կաշին, պետք ե նախապես կեղտից մաքրել, իսկ ապա լվանալ կամ շինել մեկ տոկոսային կծու նատրոնի լուծույթով: Անասունների պնդղները պետք ե մաքրել և լվանալ ախտահանիչ լուծույթով:


Միայն ալսպես մանրակրկիտ կերպով մաքրելուց ու ախտահանելուց հետո, կարելի յե համոզված լինել, վոր դաբաղի վարակը վոչնչացված ե:

ԴՈՒԱՂԲԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ

Գոմազրի ախտահանման (անվաս դարձնելու) ամենահասարակ և մատչելի յեղանակը բիոտերմիկ յեղանակն է։ Դա հիմնված է գոմազրի փոման պրոցեսների վրա, վարի ընթացքում առաջանում է բարձր ջերմություն (մինչև 60 աստիճան ծել-սի)։ Այս ախտահանման ժամանակ, դարպի վարակը վաշնչանում է բավական արագ կերպով։

Գոմազրը համապատասխան ձևով դիղելուց լեռեք շաբաթ հետո, այն կարելի է լրիվ կերպով ախտահանված համարել։

Այն շենքերում, վորտեղ գտնվել է դարադով հիվանդ անասուն, գոմազրը դուրս է տարվում այնպիսի մի տեղ,



վորն ազատ է անասունների մուտք գործելուց և դիղվում է հետեւալ ձևով։ գետնի մակերեսի վրա փռում են շոր ծղոտի մի շերտ՝ 25 սանտիմետր հաստությամբ, մեկ ու կեսից մինչև լերկու մետր լայնությամբ և ապա գոմազրը՝ մեկ ու մի քառորդ մետր բարձրությամբ Գոմազրի դեղը վերևից ծածկում են 10 սանտիմետր հաստությամբ շոր ծղոտի շերտով (և ապա նույնքան հաստությամբ տվազի շերտով—Ռ. Ա.)։

Գոմաղբն այսպես դիզելն ամենալավ հետեանքներ է տալիս և վաղուց կիրառվում ե իրեկ մի գործնական միջոցառում վոչ միայն դաբաղի, այլև սւրիշ վարակիչ հիվանդությունների դեմ պացարելու գործում:

Անասնաբակերի աղբահեղուկը պետք ե լցնել աղբահեղուկի փակ փոսերի (աղբահեղուկի ընդունաբանների) մեջ, վորաեղ դաբաղի վարակը՝ փտումի և ամիսակի կուտակման պրացեսների ազգեցության տակ՝ Զ—Ք շաբաթվա ընթացքում վաշնչանում ե. ձմեռը փտուման այս պրացեսները մի քիչ դանդաղում են և լեռնեմն դաբաղի վարակը կարող ե պահպանվել բաժական ավելի յերկար:

ԿԱՇՎԵՀՈՒՄՈՒԹՅԻՒՆ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

ԽՍՀՄ-ի ՀԺԿ-ի դաբաղի ինստիտուտում վերջերս մշակված ե դաբաղով վարակված կաշվեհումույթի ախտահանման մի նոր լեղանակը Այս լեղանակը պարզ ե և մեծ նլութական ծախքեր չի պահանջում, իսկ ամենապլիսավորը՝ կաշին այս լեղանակով մշակելը ամենաքին չի անդրադառնում պատրաստի նյութի (Փարբիկատի) վրա:

Կաշվեհումուկթի ախտահանման համար գործածվում ե հետեյալ լուծույթներից մեկը. կծու նատրունի լուծույթը՝ հագեցած աղային լուծուլթի մեջ (2 գրամ կծու նատրուն՝ մեկ լիտր հագեցած աղալին լուծույթի մեջ), կամ բիսուլֆիտի լուծույթը՝ հագեցած աղային լուծույթի մեջ (5 գր բիսուլֆիտ՝ մեկ լիտր հագեցած աղալին լուծույթի մեջ), կամ, վերջապես, սողալի ածխատի լուծուլթը՝ հագեցած աղային լուծույթի մեջ (50 գր սողալի ածխատ՝ մեկ լիտր հագեցած աղային լուծուլթի մեջ):

Կաշվեհումույթի ախտահանման այս նոր լեղանակը խորհրդային անասնաբառաժական գիտության մի մեծ նվաճումն եւ:

ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՐԱԴԻ ԴԵՐ ԳԱՐՆԱՌԱՑԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Գարնան, իրքեւ ընդհանուր կանոն, անասունի որդանիքն ամենից ավելի զգայուն և ամեն տեսակ հիվանդությունների հանդեպ:

Դարադի բռնկումները գարնանացան կամպանիայի շրջանում հաճախ ծագում են ճամփային խաղաղություններից հետու Դա տեղի լեւ ունենում այնտեղ, վորտեղ ձմեռային պահպանման անցնելուց առաջ, հակադարձադալին միջոցառումները մինչև վերջը չեն տարվել և չեն ամրապնդվել համապատասխան ձեռք։ Բռնկումները կարող են ծագել նույն ուրիշ տեղից՝ դարադից անապահով վայրից բերված դարադի միջոցով։

Առաջին գեղքում, այսինքն՝ լերը ալս կամ այն դյուդիորհը գրանում կամ շրջանում դարադը մնացել և մինչև աշուն, անասուններին արտօտավայրը ուղարկելու նախորյակին՝ պետք եւ կատարել դարադից անապահով կամ սպառնալիքի տակ գտնվող վայրերի բոլոր անտեսությունների անասնաբուժական ամենառաջադիր հետազոտություն՝ դարադի բոլոր ոջախները հայտարերելու համար Յեզ նույնիսկ այն դեպքում, լերը այն անտեսությունները, վորոնք յեզել ելին անապահով կամ գտնվել ելին վարակման սպառնալիքի տակ՝ նախընտան անասունների ձմեռային պահպանման անցնելը, և գարնանը՝ հետազոտության ժամանակ ապահով են ճանաչվել, անհրաժեշտ և ալդ տնտեսություններն ու նըանց նախիրներն, առնվազն լերկու շաբաթ, լենթարկել հատուկ պրոֆիլակտիկ ռեժիմի, Հետևաբար, բոլոր անտեսությունների վրա պետք եւ տարածել այն բոլոր սահմանափակիչ միջոցառումները, վորոնք նախատեսված են պրոֆիլակտիկ ողակային պաշտպանողական գոտիների համար։ Միայն դրանից հետո կարելի լեւ վստահ լինել, թե ավագ վայրում դարադը վերացված է։

Այն բոլոր շինանյութերը, վորտեղ գտնվել են դարա-
դով հիվանդացած անասուններ, արոտավայր ուղարկելուց
առաջ, գոմաղբից և կեղտից խնամքով պետք ե մաքրվեն
և ախտահանվեն կծու նատրոնի լերկու տոկոսալին լու-
ծույթով կամ ֆորմալինի մեկ տոկոսալին լուծույթով։
Գոմաղբը պետք ե տարրվի այնպիսի տեղեր, վորոնք պաշտ-
պանված են դարադի հանդեպ զգայուն անասունների
շփումից և դարսվի դեղերով՝ անվաս դարձնելու համար։
Անասուններին արոտավալը ուղարկելու հենց նախորյա-
կին, նրանց կաշին ամենալն խնամքով մեխանիկական մա-
քրման պետք ե լենթարկել, պճեղները մաքրել ու ախտա-
հանել կծու նատրոնի մեկ տոկոսալին լուծույթով։

ԴԱԲԱՂԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Դաբաղի բռւժումը գլխավորապես հիմնված է ախտա-
հանիչ լուծույթների կիրառման վրա, ինչպես նաև հի-
վանդ անասունների պահպանման նպաստավոր պայման-
ներ ստեղծելու վրա։ Շինությունը պետք ել լինի ընդար-
ձակ, լուսավոր, ունենա թարմ ողի մշտական հոսանք և
թարմ, չոր, մաքուր ու առատ ցամքար։ Ամրանը՝ լավ լե-
ղանակին ամրող նախիրն ավելի լավ ե թողնել արոտա-
վալը ու դաբաղով հիվանդանալու ամբողջ ժամանակա-
ընթացքում։

Կերը պետք ել լինի փափուկ և սննդարար Այդպիսի
գեղեցիկում՝ ամենից լավ ե տալ կանաչ կեր՝ թեփ կամ
ալյուր խառնած։ Անասուններին պետք ե ջրել թարմ ու
մաքուր ջրով։

Բերանի խոռոչն ուժեղ չափով վարակվելու դեպքում՝
կարելի յե գործածել կալիոնի մաքանատի կամ քացա-
խաթթվի (ըստ անամսաբուժի ցուցումի) ախտահանիչ և
չորացուցիչ լուծույթներ։ Միևնույն նպաստակով կարելի յե

պարզապես վերցնել սովորական խոհանոցի աղի թեթև լուծույթ (0,85—1 տոկոսային):

Պճեղները հիմանդանալու գեղքում՝ ամենից առաջ մաքուր պետք ե պահել վերջավորությունները, բացի վերոհիշյալներից, կիրառվում են հանրության մեջ ամենագործածական դարձած ախտահանիչ լուծույթները՝ ոծանելիքները, փոշիները (ըստ անասնաբուժի ցուցումի):

Կուրծի հիմանդանալու դեղքում՝ պետք ե մաքուր պահել այն, որական յերեք-չորս անդամ լվանալ գաղջ (գոլ) ջրով կամ ավելի լավ ե բորաթթվի 2—3 տոկոսային լուծույթով: Սրա փոխարեն կարելի յե պարզապես վերցնել բորաթթվի ոժանելիք կամ բորաթթվի վազելին: Կուրծը վորքան կարելի յե հաճախակի պետք ե կթեր:

ԴԱՐԱՂԻ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Դարաղի վերաբերյալ պրոֆիլակտիկ (նախազգուշական) միջոցառումները պետք ե սկսվեն անասնաբակի և արոտավայրի պաշտպանությունից:

Հայտնի յե, վոր դարաղն ամենից շուտ և ամենից հեշտ կերպով կարող ե բերվել տնտեսության մեջ, յեթե այդ տնտեսությունը շփփում ե դարաղից անապահով տընտեսությունների հետ՝ սահմանակից արոտավայրերի, ընդհանուր ջրարթի, ընդհանուր ճանապարհների, մարդկանց, վորոնք լերթենեկում են մի տնտեսությունից մլուար, և այլ բաների հետ: Դարաղը կարող է բերվել նախընկաման ժամանակի, յեթե անասունը բերվել ե այն վալրից, վորտեղ դարաղի համաճարակ ե յեղել:

Դարաղը կարող է բերվել կերերի հետ միասին, յեթե մթերված են դարաղով վարակված վայրերում:

Դարաղը կարող է բերվել կողմանակի մարդկանց միջոցով, դրա համար ել նըանց մուտքը տնտեսության մեջ հսկողության տակ պիտի առնել:

Ցերք գարաղը բռնկվում է այն շրջանում, ուր դանը-
վում է տնտեսությունը, հիվանդության մուտք գործելու
ամենալողը վտանգի զոյսւթյան դեպքում անգամ, պետք
է անմիջապես կիրառել այնպիսի նախազգուշական ուժիմ
(հարկադիր նախազգուշական կարանտին), վորը միանգա-
մայն բացառի այդ հնարավությունը:

Դրա համար հիվանդության ամբողջ տևողության ըն-
թացքում, պետք է առանձնացնել և ամրացնել վորոշ արո-
տավալրեր ու ջրաբրներ, վորտեղ չպետք է մուտք գոր-
ծեն մրւու տնտեսությունների անասունները։ Ցերե
տնտեսության հողամասի վրա գտնվում են ընդհանուր
ճանապարհներ, այդ գեղցում՝ համաճարակի տեսողության
ամբողջ ժամանակվա ընթացքում՝ պետք է փակել ճանա-
պարհները և սահմանել համապատասխան վերահսկողու-
թյուն, արգելելով ամեն տեսակի անառունների մուտքը։
Թեկուղ ապահով, բայց սպառնալիքի տակ գտնվող հողա-
մասում լեղած տնտեսությունների անասունների միջև
բեղմափորումը նույնպես մեծ վտանգ է ներկայացնում և
չպիտի թուլլատրել այն առանց անասնաբուժական վերա-
հսկչի թույլտվության նախազգուշական կարանտինի
ամբողջ տեսողության ընթացքում՝ պետք է սահմանափա-
կել անասնաբակերի և խողանոցների մուտքը, կցելով այդ
գործին հատուկ անասնապահներ և կթողներ, վորոնք լավ
ծանոթ պիտի լինեն պրոֆիլակտիկ ուժիմի կանոններին։

Անմիջապես պետք է արգելել կողմանակի անձանց
մուտքը վոչ միայն անասնաբակերն ու խողանոցները,
այլև ընդհանրապես տնտեսության հողամասը։ Դաբաղի
համաճարակի ամբողջ տեսողության ընթացքում՝ պետք է
արգելել ապահով տնտեսության մարդկանց շփումն՝ անա-
պահ վ տնտեսության մեջ գտնված մարդկանց հետ և ալդ
բանի վրա սահմանել ամենախիստ վերահսկողություն։

Նոր յեկած վորենե անասուն պետք է պահպի ընդհա-

նուը նախըից առանձին մեկուսացված շինութլան մեջ կամ կարանտինային բացութլա գոմում, մինչև չփորոշվի, վոր անասունը բոլորովին առողջ ե և կարող ե մացվել նախըի մեջ՝ առանց վորեւե վտանգի: Այդպիսի նախազգուշական կարանտինի ժամկետը՝ վարակիչ հիվանդությունների համար՝ սահմանված ե 14 որ:

Տնտեսութլուն բերված ամեն մի անասուն պետք ե ունենաւ վկալական այն մասին, վոր նա բերված ե վարակիչ հիվանդություններից վաղորոք հալտնի ապահով վալրից, Անասնաբուժական հսկչի կողմից տրված ալգոիսի վկալական լինելու դեպքում՝ մինույն ե, նախազգուշական կարանտինը պարտադիր ե բոլոր տնտեսությունների համար:

Մեծածավալ ու կոշտ կերերը չպիտի դուրս տարվեն այն վալրերից, վորտեղ լեղել ե դարադի համաճարակ, առնվազն յերեք ամսվա ընթացքում՝ հաշվելով հիվանդութլան վերջանալու որից: Տնտեսութլան մեջ անծանոթ կամ կասկածելի ծագում ունեցող կերեր բերվելու դեպքում՝ յերեք այդ կերից միանգամից բոլոր անասուններին չպետք ե տալ: Պետք ե տռանձնացնել սակավարժեք անասունների մի փոքր խումբ և 12—14 որվա ընթացքում կատարել փոքրձնական կերակրում, վորպեսզի դրանով վերացնենք ալս կամ այն վարակիչ հիվանդութլան և մասնավորապես դարադի մուտքի վորեւե վտանգը՝ կերի միջոցով:

ԽՍՀՄ-ի ՀԺԿ-ի դարադալին ինստիտուտում հաստատված ե, վոր սիլոսացման ժամանակ դարադի վարակը վոչչանում եւ Ալս տվյալները պետք ե ոգտագործել, լերը կերերի միջոցով դարադ հիվանդության մուտքի վտանգ կա:

Դարադը կարող ե բերվել դարադով հիվանդ մորթված անասունների մոի միջոցով: Այդպիսի դեպքերում՝ առանձին վտանգ են ներկայացնում սառեցրած միսը և

վարակված մտսերը (վերջավորություններ, լեզուն, կուրծ): Դրա համար ել առանց անապահութական հսկողության թույլտութան պետք ե խուսափել վարադի համաճարակ-ների ժամանակ վաճառահանված միս գներ:

Դարադով հիվանդ անասուններին սպանդանոցներում հարկադրաբար մորթելու դեպքում՝ նրանց միսը թույլ ե արվում զործածել կամ հանձնել առողջապահ միայն առնվազն 24 ժամվա ընթացքում՝ 8—10 աստիճան ջերմության մեջ պահելուց հետո Ալդուսի անասունների կաշիները սպանդանոցից կարող են բաց թողնվել միայն ախտահանելուց հետո:

Անասուններին սովորական ճանապարհներով, յերկաթուղով և շոգենավերով աեղափոխելիս, ճանապարհին ամեն մի կանդ առնելու վայրում՝ վորոշ և հատուկ աեղերում անասնաբուժական հսկողության տակ պիտի կատարվի նրանց կերակրումը և ջրումը:

Անասուններ բարձելու ժամանակ պետք ե պահանջել ախտահանված վագոններ, վերջիններս պետք ե ունենան համապատասխան փաստաթուղթ կամ ախտահանման-լվացման կարաբանի՝ կապարակներով ինքված լինեն:

Անասնաբուժա-սանիտարական վերահսկողության տեսակետից, առանձին, ուշադրություն պետք ե դարձնել անասունների կուտակման վայրերի և մորթելու (անասնաբապարակներ, անասնահավաքատեղիններ, սպանդանոցներ և սպանդավայրեր), մսամթերքների ու կաթնամթերքների պահպանման և վերամշակման տեղերի վրա, բրդի ու կաշվեհումույթի մշակման զործարանների վրա: Տարին առնվազն լերկու անդամ պետք ե ախտահանել անասնաբակերն ու խողանոցները, ինչպես նաև պարերաբար մաքրել ու ախտահանել այն բոլոր շինությունները, վորոնք հում անասնամթերքի մշակման հետ գործ ունեն:

Յեվ, վերջապես, նախաղդուշական նշանակություն
ունեն նաև անասունների խնամքի ու պահպանման լավ
պայմաններն ու նրանց կանոնավոր ոգտագործումը:

ԿԱԹԻ ՈՒ ՄՍԻ ԳՈՐԾՎԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՐԱՂԻ ԺԱՄԱՆԱԿԻ

Դարադի համաճարակների ժամանակ կաթը չպետք է
տնտեսության սահմաններից դուրս տանել, այլ պետք է
ոգտագործել հենց տեղում՝ յեռացած վիճակում կամ պետք
է վերամշակվի կաթնաթթվային արտադրանքների ձեռվ։
Կաթը պիտի դուրս տարվի կարանտինի վերանալուց հե-
տո միայն։


Այսող կաթը, անկախ այն բանից, թե դարադով հի-
վանդանալու վոր շրջանում ե կովից վերցված, պետք է
համարվի վտանգավոր և յենթարկվի սանիտարական պար-
տադիր նախաղդուշական մշակման (յեռացում, պաստերա-
ցում, կաթնաթթվային մթերքների պատրաստում): Կաթն
անմնաս դարձնելու համար, կարելի լե այն տաքացնել
10—15 րոպե 8-սի 70 առտիճանից վոչ-պակաս կաթը
յեռացնելիս, վայրէենտպես սպանվում ե դարադի վարակը։
Կաթը թթվելու ժամանակ դարադի վարակը նույնպես
բավական արագ վոչնչանում ե։ Դրա համար, թթու սերից
պատրաստված լուղն ու պանիրն այլևս վտանգ չեն ներ-
կայացնում։

Հիվանդության առաջին որերին մորթված անասուն-
ների միսը կարող ե դարադի վարակ պարունակելի Այդ
միսն ուտելու համար պետք է գործածել միայն լրիվ լեփ-
ված կամ լավ խորոված վիճակում։ Հիվանդ ու կամածե-
լի անասունները՝ մեծ պարտիաներով մսի համար հարկա-
դրաբար մորթելու դեպքում՝ ավելի լավ ե այդ անասուն-
ների միսը վերամշակել իրը պահածո և լեբշիկ։ Վարակ-
ված մասերը, որինակ՝ գլուխն ու վերջավորությունները,
պետք ե անմնաս դարձվեն բարձր ջերմության ազդեցու-
թյան առակ։

ՄԱՐԴՈՒ ԴԱԲՈՂԸ

Դաբաղի համաճարակների ժամանակ, մարդը դաբաղ գով վարակվում է սովորաբար դաբաղով հիվանդ կովերի հում կաթը զործածելիս Ավելի հաճախ դա լինում է լեռեխաներին հում կաթով կերակրելու ժամանակու կարելի լենույնպես վարակվել դաբաղով հիվանդ անասունն ընկնամելու դեպքում (անասնապահներ, կթողներ):

Հասակավոր մարդկանց մոտ դաբաղն այնպես է, ինչպես անասունների մոտ. մարդը վարակվում է քերանի խոռոչից, բայց հաճախ վարակը լերելում է նաև ձևների և վատների վրա:



Նկ. 7. Մարդու դաբաղ

Յերեխաների դաբաղն ավելի հաճախ հանդես է դալիս ուժեղ փորլուծի ձեռվ, փորը ցույց է տալիս թե վարակվել են ստամոքսն ու աղիքները:

Մարդկանց դաբաղի դաղտնի շրջանը տևում է 2-ից մինչև 6 որ: Մկղբնական բջտիկները զարգանում են դաբաղի հարուցիչի մուտք զործած անդում, կամ քերանի

խոսոչում. այն ժամանակ լերկը որդական բշտիկները կա-
լող են յերեան զալ ձեռների և վստների վրա՝ մատների
արանքում։ Հիվանդության ժամանակը ջերմությունը խիստ
բարձրանում է, առաջ է դալիս ընկճված դրություն,
մկանների կտրտուք ու ցավեր, սառտիկ նիհարում և
ուժասպառություն։ Հիվանդությունը տևում է կարճ
(6—10 որ), յեթե ընթանում և առանց վորեն բարդու-
թյունների, Յերեխաների դարադը դդալիորեն ծանր է լի-
նում, քան հասակավորներինը։ Ստամոքսի և աղիքների
վարակման դեպքում՝ դարադին գուգընթաց, բարձրանում
է ջերմությունը, նկատվում է սրախառնություն և վախում։
Յերեխաները հաճախ դարադից մահանում են։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դարադը վարակիչ հիվանդություն և	3
2. Վճր անասուններն են հիվանդանում դարադով	4
3. Դարադի հարուցիչը	5
4. Վարակի մուտքն անասունների որդանիզմի մեջ	8
5. Դարադի տարածումը	9
6. Դարադի նշանները	13
7. Միջոցառութենք դարադի դեմ	20
8. Պարզաբանութենք դարադի դեմ	25
9. Արհեստական վարակում	25
10. Շինությունների ախտահանումը	28
11. Գոմազրի ախտահանումը	31
12. Կաշվենումույթի ախտահանումը	32
13. Միջոցառութենք դարադի դեմ՝ զարնանացան կամպանի- այի շրջանում	33
14. Դարադի բուժումը	34
15. Դարադի պրոֆիլակտիկան	35
16. Կաթի ու մսի գործածությունը դարադի ժամանակ	39
17. Մարդու դարադը	40



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002055



ЧИСЛ 40 ЧПЧ.

А-II
24396

044,



Библиотека колхозника и рабочего села хозяйства

Проф. А. Д. Смирнов

ЯЩУР
и барбас ник

СЕЛЬХОЗГИД 1935 ПРИВАЛЬ